հաճիլ ընդ այն, այլ պահանջէր զայլ ինչս, ոպառնացեալ նմա վարել զնա յաքսոր յԷջմիածին, և կամ ածել 'ի Կոստանդինուպոլիս։ Նեղեալ միաբանաց 'ի բռնութենէ աստի՝ բողոք բարձին 'ի Դուռն, և խնդրեցին զիրաւունս, կարճել զբռնութիւն Աւետիք վարդապետի, որ զօրացեալ էր 'ի վերայ նոցա։ Իսկ դուռն հրովարտակաւ Արքայի՝ ազդարար զգանկատանս միաբանաց դատաւորին Երուսաղէմի, և եհարց ցնա՝ եթէ արդարեւ ըստ վկայութեան իւրեանց տուեալ իցեն զբովանդակ հաշիւս վանաց, եւ օրինօք ընկալեալ զգիր վկայութեան 'ի դատարանէ՝ բարձցեն զբռնութիւն Աւետիք վարդապետի, և մի տացէ թոյլ նեղել զմիաբանսն, զի բնակեսցին խաղաղութեամբ 'ի տեղիս իւրեանց։

Աւետիք վարդապետ ոչ բաւականացեալ այսու, ձեռն արկ չարչարել նաեւ զՄինաս վարդապետ վասն հաշուոյ, որ արդէն տուեալ էր և նորա ոչ ընկալեալ զայն՝ յօդէր զայլ և այլ պատճառս, և խնդրէր 'ի նմանէ և զայլ դումարս դրամոց, և յընդդէմ դառնալ Մինաս վարդապետի, ծագեցաւ 'ի միջի խռովութիւն մեծ, և յառաւել նեղիլ 'ի բռնութենէ աստի, դիմեաց առ կուսակալն Դամասկոսի Զերքէզ Մէհէմմէտ Փաշայ, և խնդրեաց 'ի նմանէ գիր առ քաղաքապետն Երուսաղէմի, զի տացէ Աւետիք միջոց ժամանակի, դալ գործակալաց Մինաս վարդապետի 'ի Կոստանդինուպոլսոյ, առ որս են ամենայն մուրհակք և թղթեանք իւր, և նա գրեաց ըստ բանի նորա, ուր 'ի վերջոյ յաւելու, չտալ թոյլ նեղել զՄինաս վարդապետ։ Լուեալ Աւետիք վարդապետի զեղեալսն յԵրուսաղէմ, մատոյց գիր ամբաստանութեան առ Եպարքոսն, և չարախօս լեալ զՄինաս վարդապետէ ասէ՝ չարագործ է և անհաւատարիմ առ ազգն, և դարձեալ է 'ի Ֆրանկութիւն, և ըստ հաճոյից իւրոց կամաց եղեալ է զվանս մեր 'ի գրաւի, և գործեալ է զմեծամեծ չարիս և զվնասս։ Ի ծանուցանել նորա զայսոսիկ բանս Արքայի, գրեցաւ հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի, քննել զամբաստանութիւնս Աւետիք վարդապետի յատենի ժողովոյ, և ծանուցանել 'ի Դուռն։

Ի հասանիլ հրամանին՝ կոչեաց դատաւորն զմեծամեծս այլազգեաց, զփոխանորդս Լատինաց, Յունաց և Ասորւոց,